ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

**ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով երեխաների համար նախատեսված հանգստի ճամբարների ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի**

**Հայտերի բացումը տեղի ունեցավ 20.01.2025թ. ժամը 12:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:**

**Գնահատող հանձնաժողովի կազմը.**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Արաքսիա Սվաջյան /նախագահ/ |
| Հանձնաժողովի անդամ՝ | Թամարա Սարգսյան /գնահատող/ |
| | Անուշ Լալազարյան /գնահատող/ |
| | Թեհմինե Կարախանյան /բացող/ |
| | Անի Խաչատրյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Լիանա Խառատյան |

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/10** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/10** ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. Հասցեները |
|---|---|---|
| 1 | «Հեքիաթային կիրճ» Մանկական տուրիստական Հանգստի Կենտրոն ՍՊԸ | heqiatayinkirch@mail.ru |
| 2 | «Արագած ճամբար» ՍՊԸ | aragaccamp@mail.ru |
| 3 | «Լավա աղբյուր» ՍՊԸ | lava-axbyur2020@mail.ru |
| 4 | «Արեգակ արդար» ՍՊԸ | susannaherher@gmail.com |
| 5 | «Համիկ մարզական սպորտ ճամբար» ՍՊԸ | ashotavetisyan81@gmail.com |
| 6 | «Արմեն Հովհաննիսյան Սաշայի» Ա/Ձ | 9671403894@mail.ru |

| | | |
|---|---|---|
| 7 | «Մաթեմիկ» Կրթական ՀԿ | matematikngo@gmail.com |
| 8 | «ԱՎ-ԿԱՆԱ» ՍՊԸ | ash401045@mail.ru |

**3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

4.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չ/Հ | Նախահաշվային գինը, ՀՀ·դրամ | **Մասնակիցների անվանումները** | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | «Հեքիաթային կիրճ» Մանկական տուրիստական Հանգստի Կենտրոն ՍՊԸ | | «Արագած ճամբար» ՍՊԸ | | «Լավա աղբյուր» ՍՊԸ | | «Արեգակ արդար» ՍՊԸ | | «Համմիկ մարզական սպորտ ճամբար» ՍՊԸ | | «Արմեն Հովհաննիսյան Սաշայի» Ա/Ձ | | «Մաթեմիկ» Կրթական ՀԿ | | «ԱՎ-ԿԱՆԱ» ՍՊԸ | |
| | | **Առաջարկված գինը, ՀՀ դրամ** | | | | | | | | | | | | | | | |
| | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ |
| 1 | 11791200 | - | - | 10990000 | 10990000 | - | - | 9463200 | 11355840 | - | - | 11000000 | 11000000 | 11780000 | 11780000 | - | - |
| 2 | 41269200 | - | - | - | - | - | - | - | - | 41269000 | 41269000 | - | - | - | - | - | - |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 43037880 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 43037000 | 43037000 |
| 4 | 32425800 | - | - | 32425000 | 32425000 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 5 | 30657120 | 30657000 | 30657000 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 6 | 29478000 | - | - | - | - | 29478000 | 29478000 | - | - | - | - | - | - | - | - | - | - |

**5. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ առկայության, սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.**

5.1 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետի սահմանված ժամկետում, ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3,Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 313 հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 21.01.2025թ. ժամը 12.00**

**6. Տվյալներ մասնակիցների հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

6.1 «Հեքիաթային կիրճ» Մանկական տուրիստական Հանգստի Կենտրոն ՍՊԸ-ի, «Արագած ճամբար» ՍՊԸ-ի, «Լավա աղբյուր» ՍՊԸ-ի, «Համմիկ մարզական սպորտ ճամբար» ՍՊԸ-ի, «ԱՎ-ԿԱՆԱ» ՍՊԸ-ի, «Արմեն Հովհաննիսյան Սաշայի» Ա/Ձ-ի և «Մաթեմիկ» Կրթական ՀԿ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, ուստի վերջիններիս հայտերը գնահատվում են բավարար:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

6.2 «Արեգակ Արդար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

6.2.1 Հավելված 1 դիմում հայտարարությունով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումով

բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ թղթային ձևով ներկայացված հայտարարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, քանի որ մասնակիցը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ:

6.2.2 ներկայացված Հավելված 1 դիմում հայտարարությունը նկար է, քանի որ հնարավոր չէ ստուգել՝ նշված փաստաթղթի էլեկտրոնային թվային ստորագրությունը զետեղված է «Նույնականացման քարտի մասին» ՀՀ օրենքով տրամադրված նույնականացման քարտում թե ոչ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**6.3** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Արեգակ Արդար» ՍՊԸ –ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.2 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

6.4 Հանձնաժողովի նիստը շարունակել «Արեգակ Արդար» ՍՊԸ–ի կողմից անհամապատասխանությունը շտկելուց հետո՝ էլեկտրոնային գնումների կազմակերպման կարգին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 23.01.2025թ.**

**7. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.**

**7.1** «Արեգակ Արդար» ՍՊԸ - ն սահմանված ժամկետում ամբողջությամբ չի շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝ Հավելված 1 դիմում հայտարարությամբ ներկայացված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումով կրկին բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

***7.2*** Հիմք ընդունելով սույն արձանագրության 7.1 կետը «Արեգակ Արդար» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**8. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած և մերժված մասնակիցների մասին.**

**8.1** Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը ՝

***1-ին տեղ զբաղեցրած ընտրված մասնակից ճանաչել.***

1-ին և 4-րդ չափաբաժինների մասով ՝ «Արագած ճամբար» ՍՊԸ-ին,

2-րդ չափաբաժնի մասով ՝ «Հասմիկ մարզական սպորտ ճամբար» ՍՊԸ-ին,

3-րդ չափաբաժնի մասով ՝ «ԱՎ-ԿԱՆԱ» ՍՊԸ-ին,

5-րդ չափաբաժնի մասով ՝ «Հեքիաթային կիրճ» Մանկական տուրիստական Հանգստի Կենտրոն ՍՊԸ-ին,

6-րդ չափաբաժնի մասով ՝ «Լավա-Աղբյուր» ՍՊԸ-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:**

**<u>2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել.</u>**

1-ին չափաբաժնի մասով՝ «Արմեն Հովհաննիսյան Սաշայի» Ա/Ձ –ին

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:**

**<u>3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել.</u>**

1-ին չափաբաժնի մասով՝ «Մաթեմիկ» Կրթական ՀԿ-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:**

**9. Գնահատման արդյունքների մասին.**

**9.1** Հրապարակել 1-6-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու որոշման հայտարարության տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին էլեկտրոնային ARMEPS համակարգով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**9.2** Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը՝ 1-ին չափաբաժնի մասով կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «Արեգակ արդար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողով՝**

--------------------------- Արաքսիա Սվաջյան /նախագահ/

--------------------------- Թամարա Սարգսյան

--------------------------- Անուշ Լալազարյան

--------------------------- Թեհմինե Կարախանյան

--------------------------- Անի Խաչատրյան

--------------------------- Լիանա Խառատյան /քարտուղար/